ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 695-22

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «24» «11» 2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պատականությունները կատարող Արմինե Խառատյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ն** ի դեմս տնօրեն Գառնիկ Հովհաննիսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի **«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»** N 1762-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Կազմակերպության նախորդ տարիների հարկային պարտավորությունների մարման նպատակով Կազմակերպությանը հատկացնել 1022 **«Գյուղատնտեսության խթանման»** ծրագրի **11002 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը» միջոցառմամբ նախատեսված 56,571.0** ***(հիսունվեց միլիոն հինգ հարյուր յոթանասուն մեկ հազար)*** դրամ գումար:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք հարկային պարտավորությունների կատարման ժամանակացույցը ներկայացված է սույն Պայմանագրի N2 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջել հարկային պարտավորությունները մարել Պայմանագրով սահմանված ժամկետներում:

2.1.2 Կազմակերպությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, ինչպես նաև հաշվետվություն՝ սույն գումարի չափով հարկային պարտավորությունների վճարման վերաբերյալ, Պետական մարմնի կողմից գումարը Կազմակերպությանը փոխանցելու օրվանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.1.3 Պայմանագրով սահմանված պահանջները չկատարելու դեպքում չընդունելու իրականացված ծախսը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4 Սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու պետական բյուջե վերադարձնել չվճարված գումարները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային N1 հավելվածի միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են Պայմանագրին կից Ձև N 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3. Կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4. Սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել N1 հավելվածի միջոցառման իրականացման մասին հաշվետվություններ, ինչպես նաև հարկային պարտավորությունները կատարումն հավաստող վճարային փաստաթղթերը:
2.4.5. Սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
2.4.6. Սույն պայմանագրով նախատեսված N1 հավելվածի միջոցառման տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառնման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:
2.4.7. Սույն Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը չի կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարը 2022 թվականին ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:
3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի կատարման համար Կազմակերպությանը, որպես դրամաշնորհ ամբողջությամբ վճարել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից, Հավելվածից և Ձևից, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը.

Հավելված N1 - Ծրագրի միջոցառում,

Հավելված N2 – Ծրագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց,

Ձև N1 – Հանձնաման-ընդունման ԱԿՏ:

8.2 Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են Պայմանագրին կից Ձևի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2 կետում նշված ժամկետներում, Հաշվետվության և ծախսը հավաստող փաստաթղթերի հետ միասին, երկու օրինակից լրացված, ստորագրված և կնքված ներկայացվում է Կազմակերպության կողմից:

8.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 8 (ութ) էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

8.5 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ 0041, ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն	Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011032258	Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ 01805817
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ	Տնօրեն՝ ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
2022 թվականի 11 29 -ին կնքված
695-22 N պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Անվանումը	Իրականացվելիք միջոցառման				
	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Ընդամենը
Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման միջոցառման շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն»ՊՈԱԿ-ի հարկային պարտավորությունների մարմանը աջակցություն:	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի կողմից կայացված թիվ 63336-20Ա և N75649-10Ա որոշումների համաձայն 2018-2019 թթ-ին «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ԱԱՀ-ի վճարման ապահովում:	<<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի հարկային պարտավորությունների մարում:	<<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի բնականոն գործունեության ապահովում	25.12.2022 թ.	56,571.0
ԸՆԴԱՄԵՆԸ					**56,571.0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032258
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները
կատարող՝ _____ ԱՐԵՆԱՆ ԽՍՐԱՏՅԱՆ

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն»ՊՈԱԿ
Հասցե՝ 0041, ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն՝ _____ ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N1
2022 թվականի 11 29 -ին կնքված
695-22 N պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Հիմնարկի անվանումը՝ **«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ**

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
04	02	01	38	104004

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը՝ **900011032258**

Ծրագրի անվանումը՝ **Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը**

(հազար դրամ)

Ձեռք բերվող ապրանքի,աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին՝ աճողական												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
~~Պետական աջակցություն~~ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման միջոցառման շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն»ՊՈԱԿ-ի հարկային պարտավորությունների մարմանը աջակցություն:	4637	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	56,571.0	56,571.0	56,571.0
ԸՆԴԱՄԵՆԸ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	56,571.0	56,571.0	56,571.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032258
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝ ԱՐՄԱՆ ԽԱՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն»ՊՈԱԿ
Հասցե՝ 0041, ք.Երևան, Էրեբեանի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

Տնօրեն ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

Ձև-1
2022 թվականի «__11__» «__24__»-ին
կնքված N 635-22 պայմանագրի
փոխնախարար՝
———————— Ա. ԽՈՉՈՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ 0041, ք.Երևան, Էրեբունի 12/6

Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն

Հ/Հ 900018003872

ՀՎՀՀ 01805817

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/Հ 900011032258

ՀՎՀՀ 02698604

ԱԿՏ N___

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«——» «————————» 2022թ.

Պայմանագրի անվանումը՝ ————————————————————————

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «——» «————————» 2022թ.

Պայմանագրի համարը՝ N ————————

Պատվիրատուի անվանումը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված N ——— հաշվետվությունը ——————— Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ միջոցառումը՝

Իրականացված միջոցառման							
Անվանումը	Գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազ.ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը ըստ պայմանագրի
		ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Ծառայությունը հանձնեց՝

————————————

ստորագրություն

————————————————

Անուն, Ազգանուն

Ծառայությունը ընդունեց՝

————————————

ստորագրություն

————————————————

Անուն, Ազգանուն